# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք. Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773*


**№ ԴԴ-3-Ե-** 4955

**«16» հունիսի 2022թ.**

**ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ**

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2022թ. մայիսի 25-ի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ՝ մինչև 2022թ. հունիսի 11-ը ներառյալ: Հիշյալ անգործության ժամկետում որևէ մասնակից չի բողոքարկել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ուստի որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին:

Որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 30 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ**
**ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ** **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով*
*գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ.՝ /+37410/ 511-787, 511-788*